գիւղացիները համակրանքով էին դիմաւորում հայ ներկայացուցիչներին, որոնք մինչև Հայաստանի սահմանը անցան բարեկամական ցոյցերով։

Հայաստանում, ճանապարհին, ամէն տեղ Ազգ. Խորհուրդն ու կառավարութիւնը ընդունեցին անվերապահ համակրանքով։

Առաջին հանդիսաւոր ընդունելութիւնը Հայաստանի հողի վրա տեղի ունեցաւ Դիլիջանում։ Հակառակ անձրևոտ եղանակին, ճիաւոր մի հարիւրեակ սպասում էր հիւրերին գիւղից դուրս։ Եարալեանի ամառանոցի առաջ, որը յատկացուած էր հիւրերին դիշերելու, դրուած էր պատուոյ պահակ։ Ազգ. Խորհրդի նախագահի բարևի վրա զինուորները պատասխանեցին հայերէն. «բարև՛, հազար բարի՛»։ Դիլիջանցիները պատրաստել էին հիւրասիրութիւն և յաջորդ օր, հանդիսաւորութեամբ ճանապարհ դրին Երևան։ Ձօրքերը բռնել էին ճանապարհի երկու կողմերը։ Ժողովուրդը բարեմաղթութիւններ էր անում։

Սեմեոնովկայում աղ ու հացով ընդառաջ եկան ռուս ազգարնակութեան ներկայացուցիչները և գնդ. Սամարցեանը իր գնդով։ Սւ. Սահակեանը ընդունեց աղն ու հացը, դիտեց զօրքը և ողջոյնի խօսք ասաց հաւաքուածներին։

Ելենովկայում խռնուած էր ահագին բազմութիւն մերկ ու թշուառ գաղթականների։ Ռուս բնակիչները հեռացել էին Հիւսիսային Կովկաս և նրանց տները բռնել էին Կարսի, Շիրակի, Ղարաքիլիսայի հայ փախստականները։ Երևանի Ազգ. Խորհուրդը այստեղ բաց էր արել մի ճաշարան և ձրի կերակուր էր տալիս աւելի քան 5,000 մարդու։

Յուլիս 9-ին, երեկոյեան դէմ հասան Ախտա։ Երևանից եկել էին դիմաւորելու Արամը և տեղական կառավարութեան անդամները։ Փողոցի դլխին կանգնած էին զօրքն ու զինուորական նուագախումբը։ Սւ. Սահակեանը ընդունեց հրամանատարի զեկուցումը. ապա զօրամասերը, կանոնաւոր շարքերով, դրօշակները պարզած ու երաժշտութեամբ, անցան Ազգ. Խորհրդի ու կառավարութեան անդամների առջևից։ Տեսարանը յուզիչ էր։

Հայկական Կորպուսի սպայակոյտը գօր. Նազարբէկեանի գլխաւորութեամբ հիւրերին ընդունեց Քանաքեռում, ուր պատրաստուած էր թէյասեղան, որի միջոցին արտասանուեցին հանդիսաւոր ճառեր։

Ուշ երեկոյեան հասան Երևան։ Քաղաքը զարդարուած էր դրօշակներով, գորգերով և կանաչով։ Աղստաֆեան փողոցը լեցուած էր բազմութեամբ։ Փողոցի երկու կողմը շարքերով կանգնած էին զօրքերը՝ Սարդարապատի ու Բաշ-Արարատի հերոսները։ Հրամանատարի զեկուցումից յետոյ հնչեց երաժշտութիւնը և խանդավառ «կեցցէ՛»-ն հազարաւոր բերաններից։

Հասարակութիւնը առանձնապէս ջերմ ընդունելութիւն ցոյց տուեց գերմանացի սպաներին։

Երեկոյեան տեղի ունեցաւ պաշտօնական ընդունելութիւն, որին ներկայ էին Թիֆլիսի և Երևանի Ազգ. Խորհուրդների և կառավարութեան անդամները, ռուս, ուկրայինցի ու մահմեդական ազգարնակութեանց ներկայացուցիչները, պարսկական հիւպատոսը, գերմանական և թիւրք սպաները։ Արտասանուեցին բոլորի կողմից ողջոյնի ճառեր, որոնց պատաս-